ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 29 » օգոստոս 2025թ. No 5254 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԻՄԱԼԱՅԱ ՎԵԼՆԵՍ ՔՈՄՊԱՆԻ, ՄԱԿԱԼԻ, ԲԵՆԳԱԼՈՒՐՈՒ, 562 162 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՀԻՄԱԼԱՅԱ ՎԵԼՆԵՍ ՔՈՄՊԱՆԻ, ՄԱԿԱԼԻ, ԲԵՆԳԱԼՈՒՐՈՒ, 562 162, ՀՆԴԿԱՍՏԱՆ «ՍՊԵՄԱՆ ՖՈՐՏԵ Ն ՎԻՏԱՆԻԱ ՔՆԱԲԵՐ, ԱՍՏԵՐԱԿԱՆՏԱ ԵՐԿԱՐԱՏԵՐԵՎ, ՀԱԶԱՐ ՎԱՅՐԻ, ԹԱՎՇՅԱ ՈՒՆԴԵՐ, ԽՃԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՍԿԻ, ԱՐԳԻՐԵԱ ԳԵՂԵՑԻԿ, ՏԱՏԱՇ ՓՌՎՈՂ, ԼԵՊՏԱԴԵՆԻԱ ՑԱՆՑԱՅԻՆ, ՌԱՈՒՎՈԼՖԻԱ ՕՁԱՅԻՆ, ՊԱՐՄԵԼԻԱ ՄԱՐԳԱՐԻՏԱՅԻՆ ԴԵՂԱՀԱՏԵՐ 39ՄԳ+19ՄԳ+10ՄԳ+10ՄԳ+10ՄԳ+19ՄԳ+19ՄԳ+19ՄԳ+18,75ՄԳ+10ՄԳ; (100) ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱՅՈՒՄ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ դեղերի վերագրանցման իրականացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված Հնդկաստանի Հիմալայա Վելնես Քոմպանի, Մակալի, Բենգալուրու, 562 162 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հիմալայա Վելնես Քոմպանի, Մակալի, Բենգալուրու, 562 162, Հնդկաստան «Սպեման ֆորտե Ն վիտանիա քնաբեր, աստերականտա երկարատերև, հազար վայրի, թավշյա ունդեր, խճանկարային ոսկի, արգիրեա գեղեցիկ, տատաշ փռվող, լեպտադենիա ցանցային, ռաուվոլֆիա օձային, պարմելիա մարգարիտային դեղահատեր 39մգ+19մգ+10մգ+10մգ+10մգ+19մգ+19մգ+19մգ+18,75մգ+10մգ; (100) պլաստիկե տարայում» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 23302 առ 25.08.2025թ. բացասական եզրակացության համաձայն լիարժեք փորձաքննություն իրականացնելու համար անհրաժեշտ նյութերը հայտատուի կողմից չեն ներկայացվել:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետի՝ դեղի վերագրանցումը մերժվում է, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերից որևէ մեկը կամ նմուշները կամ լաբորատոր փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը բացակայում են:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի՝ Դեղի վերագրանցումը մերժելը իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից՝ իրականացված փորձաքննության արդյունքում տրված փորձագիտական եզրակացության հիման վրա:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N1 հավելվածի 52-րդ կետի՝ դեղի վերագրանցման մերժման վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձագիտական եզրակացությունը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 27-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ, 7-րդ, 52-րդ կետերով, սահմանված իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Հնդկաստանի Հիմալայա Վելնես Քոմպանի, Մակալի, Բենգալուրու, 562 162 արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հիմալայա Վելնես Քոմպանի, Մակալի, Բենգալուրու, 562 162, Հնդկաստան «Սպեման ֆորտե Ն վիտանիա քնաբեր, աստերականտա երկարատերև, հազար վայրի, թավշյա ունդեր, խճանկարային ոսկի, արգիրեա գեղեցիկ, տատաշ փռվող, լեպտադենիա ցանցային, ռաուվոլֆիա օձային, պարմելիա մարգարիտային դեղահատեր 39մգ+19մգ+10մգ+10մգ+10մգ+19մգ+19մգ+19մգ+18,75մգ+10մգ; (100) պլաստիկե տարայում» դեղի վերագրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանը երկու աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157